ԿԱՐԾԻՔ

Սուրեն Սարգսի Բաղինյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված <<**Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները**>> վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մասին /Մասնագիտությունը՝ **ԺԲ.00.04.– Դատական իրավունք –** (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)

Թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք իրավական, քաղաքական և քրեածին գործոններով:

Նախ, ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումների, տարածաշրջանային հակամարտությունների, տեղեկատվական և հիբրիդային պատերազմների պայմաններում պետական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները ձեռք են բերել նոր դրսևորումներ: Պետական դավաճանությունը ներկայումս կարող է իրականացվել ոչ միայն ավանդական եղանակներով (լրտեսություն, պետական գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցում), այլև տեղեկատվական տեխնոլոգիաների, կիբեռտարածության, օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցության և այլ ժամանակակից մեխանիզմների միջոցով, ինչը զգալիորեն բարդացնում է դրանց բացահայտումն ու ապացուցումը:

Երկրորդ, պետական դավաճանությունը հանդիսանում է պետության ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը, պաշտպանունակությանը և ազգային անվտանգությանը սպառնացող առավել վտանգավոր հանցագործություններից մեկը: Նման հանցագործությունների արդյունավետ քննությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն կոնկրետ քրեական գործի շրջանակներում ճշմարտության բացահայտման, այլև ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Երրորդ, պետական դավաճանության գործերով ապացուցման առարկան առանձնանում է իր բարդությամբ: Նման գործերում հաճախ օգտագործվում են գաղտնի կամ սահմանափակ հասանելիության տեղեկություններ, քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներ, էլեկտրոնային ապացույցներ, միջազգային համագործակցության շրջանակներում ստացված տվյալներ, ինչը պահանջում է հատուկ քրեագիտական մեթոդների և տակտիկական մոտեցումների մշակում ու կիրառում:

Չորրորդ, Հայաստանի Հանրապետության անվտանգության միջավայրում վերջին տարիներին տեղի ունեցած զարգացումները, պետական գաղտնիքների պահպանության, հակահետախուզական գործունեության և ազգային անվտանգության ապահովման ոլորտներում առաջացած նոր մարտահրավերները պահանջում են պետական դավաճանության հանցագործությունների քննության գիտականորեն հիմնավորված մեթոդիկայի մշակում և կատարելագործում:

Հինգերորդ, քրեական դատավարական օրենսդրության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման պայմաններում անհրաժեշտություն է առաջացել վերանայելու պետական դավաճանության գործերով քննության ավանդական մոտեցումները, ուսումնասիրելու միջազգային փորձը և մշակելու արդի պահանջներին համապատասխան քրեագիտական հանձնարարականներ:

Այսպիսով, պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունների ուսումնասիրությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, քանի որ նպաստում է տվյալ հանցագործությունների բացահայտման, քննության արդյունավետության բարձրացման, ապացուցման գործընթացի կատարելագործման և պետության ազգային անվտանգության պաշտպանության մակարդակի ամրապնդմանը:

Վերը նշվածը վկայում է, որ Սուրեն Բաղինյանի կողմից ընտրված թեման <<Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները>> վերտառությամբ գիտական հետազոտության համար բացառիկ արդիական է:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանն այնպիսին է, որ թույլ է տալիս այն համարել պետական դավաճանության թեմային նվիրված մենագրական բնույթի առաջին հայրենական աշխատանքը, ինչը պայմանավորում է ատենախոսական հետազոտության գիտական նորույթի բարձր մակարդակը և դրա տեսական նշանակությունը:

Կարծում ենք, որ քննարկվող ատենախոսության մեջ հեղինակի այն եզրակացությունները, որոնք վերաբերում են պետական դավաճանության հանցագործությունների քննության էության և առանձնահատկությունների ըմբռնման տեսական հիմքերի հիմնավորմանը, ինչպես նաև դրանց դոկտրինալ մեկնաբանություններին, ունեն կարևոր գիտական արժեք: Այս առումով, պաշտպանության ներկայացված աշխատանքում ատենախոսի կողմից ձևակերպված՝ պետական դավաճանության հանցագործությունների քննության տարբեր ասպեկտների համակարգային ուսումնասիրության տեսական արդյունքները, այդ հենքի վրա հեղինակի կողմից մշակված և ձևակերպված նշված հանցագործությունների քննության բնութագրերը, ինչպես նաև քրեական դատավարության հետագա ուսումնասիրության համար նրա կողմից մշակված և առաջարկված գիտական հիմքը, ունեն մեծ տեսական և գործնական նշանակություն:

Ատենախոսը մեթոդաբանական տեսանկյունից ճիշտ է ձևակերպել իր հետազոտության օբյեկտը, նպատակը և առարկան: Նպատակի իրագործմանը նպաստել է հետազոտական խնդիրների լավ մտածված համակարգի առաջադրումը, որոնք, ինչպես հետևում է ատենախոսության բովանդակությունից, ամբողջությամբ լուծվել են: Ատենախոսության հեղինակը կիրառել է գիտության մեջ փորձարկված և ընդունված

մեթոդաբանություն, ինչը նպաստել է հավաստի և հիմնավորված արդյունքների ստացմանը:

Հեղինակը մեթոդոլոգիական տեսանկյունից շատ ճիշտ է ձևակերպել իր հետազոտության օբյեկտը, նպատակը և առարկան: Նպատակի իրականացումն ապահովվել է հետազոտության հիմքում դրված խնդիրներով, որոնք ըստ աշխատանքի բովանդակության ամբողջությամբ հաղթահարված են:

Հետազոտության տեսական հիմքը կազմել են իրավունքի տեսության, համեմատական իրավագիտության, օպերատիվ-հետախուզական գործունեության, քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ոլորտներում հայրենական և օտարերկրյա գիտնականների գիտական աշխատությունները, որոնք առնչվում են ուսումնասիրվող հիմնախնդրին: Ատենախոսության մատենագիտական ապարատի մասնագիտական ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ հեղինակի ուշադրությունից դուրս չի մնացել ուսումնասիրվող խնդիրներին վերաբերող ժամանակակից որևէ հրապարակում:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ հեղինակը միջազգային և ներպետական դատական պրակտիկայի և դրա դոկտրինալ մեկնաբանման միջոցով առաջին անգամ կատարել է պետական դավաճանության հանցագործունների քննության հարցերի համակարգային հետազոտություն: Պետք է ընդունել ատենախոսի կողմից հետազոտության թեմայի վերաբերյալ ձևակերպված հիմնարար եզրակացությունների գիտական հիմնավորվածությունն ու արժեքը: Գիտական արժեք ունեն ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացված բոլոր դրույթները: Մենք համամիտ ենք և լիովին համաձայն ենք ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացված բոլոր դրույթների հետ:

Անհրաժշտ է ընդունել, որ հեղինակի կողմից **պաշտպանության ներկայացված բոլոր դրույթներն** օժտված են գիտական նորույթով և միանշանակ ընդունելի են: Հետազոտվող

թեմայի տարբեր ասպեկտների ուսումնասիրությունը թույլ է տվել հեղինակին անել եզրակացություններ, որոնք ունեն տեսական և գործնական նշանակություն: Մեր կարծիքով, հեղինակին հաջողվել է լուծել այն խնդիրները, որոնք անհրաժեշտ են քրեական դատավարության իրավունքի և կրիմինալիստիկայի գիտության զարգացման համար: Այն կարևոր է նաև օրինաստեղծ գործունեությանը տեսական աջակցության համար:

Ատենախոսությունը հանդիսանում է հասուն և ավարտուն գիտական հետազոտություն: Այդ մասին վկայում է այն հանգամանքը, որ դրանում լուծվել են հետազոտական մի շարք բավականին բարդ խնդիրներ: Դրանցից յուրաքանչյուրն իր բնույթով ինքնատիպ է և իսկապես կարևոր խնդիր է, որը կանգնած է իրավաբանական գիտության առջև և ունի բացառիկ նշանակություն իրավակիրառական պրակտիկայի համար:

Ատենախոսության առանձնահատուկ արժեքը կայանում է նաև նրանում, որ ուսումնասիրված հիմնախնդիրների տեսական վերլուծությանը զուգահեռ, հեղինակի կողմից նախանշվել են ստացված գիտական արդյունքների հետագա զարգացման և կիրառման լուրջ հեռանկարներ՝ ապագա գիտական հետազոտությունների շրջանակներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը կատարվել է տեսական և գիտագործնական կոնֆերանսներում, ամսագրերում և գիտական ժողովածուներում հրատարակված գիտական հոդվածներում, որոնք հայտնի են իրավական լայն հանրությանը:

Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված ինը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկ նյութերի ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է հայտարարված թեմային, հետազոտության նպատակին և խնդիրներին, բացահայտում է դրա հիմնական

հիմնախնդիրներն ու եզրակացությունները: Ատենախոսության յուրաքանչյուր հատված օրգանական միասնություն է կազմում մյուս հատվածների հետ: Աշխատանքն առանձնանում է ներքին ամբողջականությամբ, պարունակում է նոր գիտական արդյունքներ և դրույթներ, որոնք հեղինակը ներկայացնում է հրապարակային պաշտպանության, ինչը վկայում է հեղինակի անձնական և նշանակալի ներդրման մասին գիտության զարգացման գործում: Հեղինակի կողմից առաջարկված լուծումները հիմնավորված են, ինչպես նաև գնահատված և համեմատված են գիտությանը հայտնի այլ լուծումների հետ: Աշխատությունը գրված է գրագետ գրական լեզվով, համոզիչ և հետևողական ոճով: Ատենախոսը ցուցաբերել է խորքային գիտելիքներ, ինչը, անկասկած, հարստացնում է իրավաբանական գիտությունը:

Աշխատանքի բովանդակությունից հետևում է, որ այն կատարված է տեսական և գործնական բարձր մակարդակով, դրանում հանդիպում ենք բավականին հետաքրքիր առաջարկությունների, որոնք այսօր օրենսդրության մեջ ամրագրելու անհրաժեշտություն ունեն:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է պետական դավաճանության քրեաիրավական, պետական դավաճանության կրիմինալիստիկական բնութագրերին և պետական դավաճանության մեխանիզմի տիպային մոդելներին:

Այսպես, արդարացի է հեղինակի այն պնդումը, որ Սահմանադրական կարգի հիմունքների և պետական անվտանգության դեմ ուղղված հացագործությունների համակարգում կենտրոնական տեղ է զբաղեցնում պետական դավաճանությունը, որն ինչպես նախկին, այնպես էլ գործող ՀՀ քրեական օրենսգրքով դասվում է առանձնապես ծանր հանցագործությունների շարքին: Պետական դավաճանության հանրային վտանգավորությունը դրսևորվում է նրանում, որ հանցագործների գործողություններն ուղղված են ՀՀ-ի ինքնավարության, տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության դեմ, ինչն իր հերթին վտանգի տակ է դնում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է պատական դավաճանության քննության սկզբնական փուլի առանձնահատկություններին: Հեղինակն առավել մանրամասն ներկայացրել է պետական դավաճանության քննության ընթացքում պարզաբանման ենթակա հիմնական հանգամանքները: Հեղինակը հաշվի առնելով նշված բնույթի հանցագործությունների բացահայտման բարդությունը՝ առավել մանրամասն հետազոտել է պետական դավաճանության քննության ընթացքում քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործության հիմքերն ու տեխնոլոգիաները:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է պետական դավաճանության քննության ընթացքում ապացուցողական գործողությունների կատարման տակտիկատեխնոլոգիական առանձնահատկություններին:

Աշխատանքում կարելի է հանդիպել ուշադրության արժանի բազմաթիվ առաջարկությունների, որոնք կարևոր նշանակություն ունեն նշված հանցագործությունների արդյունավետ քննության իրականացման համար: Ատենախոսը քննարկել է այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են քննչական գործողությունների կատարման տակտիկական առանձնահատկությունները, գաղտնի քննչական գործողությունների կատարման տեխնոլոգիաները և հատուկ գիտելիքների տեխնոլոգիական առանձնահատկությունները: Պետք է համաձայնել հեղինակի այն պնդման հետ, որ պետական դավաճանության քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառումն առանձին տեսակի փորձաքննությունների կատարման եղանակով անգնահատելի դերակատություն ունեն ապացուցողական զանգվածի ձևավորման և ամրապնդման համար, իսկ վարութային գործողություններին փորձագետի մասնակցության ձևով՝ նպաստում է դրանց արդյունավետության ու ապացուցողական նշանակության բարձրացմանը:

Պաշտպանության ներկայացված հիմնահարցերի վերաբերյալ մենք պաշտպանում ենք հեղինակի բոլոր դիրքորոշումները: Չնայած այն բանին, որ աշխատանքը կատարվել է բավականին բարձր մակարդակով, այնուամենայնիվ աշխատանքում կան դրույթներ, որոնք վիճահարույց են:

1. Պաշտպանության ներկայացված թվով վեցերորդ դրույթում հեղինակն արտահայտում է այն միտքը, որ պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված վարույթների արդյունավետ քննության գլխավոր նախապայմաններից է համարվում փոխգործողության շարունակական ապահովումը քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող այն մարմնի ու ստորաբաժանումների հետ, որոնք ներգրավված են եղել հետախուզական և հակահետախուզական ուղղություններով իրականացված աշխատանքներին: Անշուշտ, հասկանալի է փոխգործողության մնան մոդելի թե քրեադատավարական, և թե կրիմինալիստիկական արդյունավետությունը, այդուհանդերձ, նկատի ունենալով հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից ներգրավվածությունը պետական դավաճանության դրսևորման հանցավոր մեխանիզմում, ինչպես նաև հանցավոր իրադրության առանձնահատկությունները, չպետք է բացառել, փոխգործողության հնարավորությունն ու անհրաժեշտությունը նաև պետական դավաճանության քրեական վարույթների քննության ընթացքում նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող այն մարմնի ու ստորաբաժանումների հետ, որոնք ներգրավված չեն եղել մինչև քրեական վարույթ նախաձեռնելն օրենքով սահմանված կարգով իրականացված օպերատիվ-հետախուզական աշխատանքներին:
2. Հեղինակն աշխատանքի առաջին գլխի առաջին պարագրաֆում անդրադառնում է պետական դավաճանության քրեաիրավական բնութագրին՝ մանրամասն վերլուծելով հանցակազմի տարրերը, ընդ որում՝ բացահայտում որոշ բացեր և որպես արդյունք՝ ներկայացնում առաջարկություններ ՀՀ քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի դիսպոզիցիայում լրացումներ կատարելու վերաբերյալ: Քանի որ արված առաջարկություններն ու հետևությունները հավասարապես կարող են վերաբերելի լինել նաև լրտեսության հանցակազմերին, ուստի նպատակահարմար կլիներ նյութի շարադրանքում զուգահեռներ տարվեին լրտեսության հանցակազմի հետ և համեմատական վերլուծության ենթարկվեին ՀՀ քրեական օրենսգրքի 424-րդ հոդվածի հանցակազմի տարրերը:

3. Պաշտպանության ներկայացված վերջին դրույթում որպես պետական դավաճանության քննությանը բնորոշ օրինաչափություն խոսվում է ապացուցողական տեղեկատվության հնարավոր դեֆիցիտի մասին՝ հիմնավորելով, որ դավաճանական գործողությունների առանձին դրվագներ տեղի են ունենում օտարերկրյա պետության իրավազորության տարածքներում, որոշ դեպքերում՝ դիվանագիտական քողարկման կամ այլ հովանու ներքո, ուստի նման պայմաններում միանգամայն պակաս արդյունավետ, իսկ երբեմն էլ անհնարին են դառնում տեղում վարութային գործողությունների կատարումը, փաստական տվյալների ստացումը:

   Միանգամայն համամիտ լինելով արտահայտված տեսակետի հետ, այդուհանդերձ գտնում ենք, որ նման պարագայում կիրառելի արդյունավետ գործիքակազմ կարող է հանդիսանալ միջազգային իրավական փոխօգնության պայմանագրերով և օրենսդրությամբ նախատեսված հնարավորությունների օգտագործումը:

4. Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ պարագրովում հեղինակը մանրամասն վերլուծում է պետական դավաճանության քննության ընթացքում գաղտնի քննչական գործողությունների կատարման առանձնահատկություններն ու տեխնոլոգիան, ընդ որում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում արձանագրված իրավական դիրքորոշումների համատեքստում հիմնավորելով դրանց հնարավոր կոմբինացիաները, որոնք էականորեն բարձրացնում են այս տեսակ հանցագործությունների քննության արդյունավետությունը: Սակայն նյութի շարադրանքից պարզ չէ դառնում, թե նման կոմբինացիաները բնորոշ են միայն պետական դավաճանության դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների քննությանը, թե դրանք կարող են կիրառելի լինել նաև այլ տեսակ հանցագործությունների քննության համար:

5. Եվ վերջապես աշխատանքի 3-րդ գլխի 3-րդ պարագրաֆը, որը նվիրված է պետական դավաճանության քննության ընթացքում փորձաքննությունների կատարման տեխնոլոգիական առանձնահատկություններին, կարծում ենք նպատակահարմար կլիներ պարագրաֆի շրջանակներում առավել մանրամասն անդրադառնալ

փորձաքննությունների առանձին այն տեսակներին որոնք բնորոշ են այս տեսակ հանցագործությունների քննությանը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ատենախոսության նախաբանում հետազոտության խնդիրների շարքում ընդգրկված է նաև պետական դավաճանության քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման տեխնոլոգիայի ու հնարավորությունների բացահայտումը:

Վերը շարադրվածը մեզ հնարավորություն է տալիս գալ հետևյալ հետևության՝

1. Սուրեն Սարգսի Բաղինյանի <<**Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները**>> թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.04.– **Դատական իրավունք** – (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությանը:

2. Սուրեն Սարգսի Բաղինյանի <<**Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները**>> թեկնածուական ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք, որում լուծվել են այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր նշանակություն ունեն քրեական դատավարության իրավունքի, կրիմինալիստիկայի և օպերատիվ-հետախուզական գործունեության զարգացման համար: Նշված աշխատանքն առանձնանում է իր ներքին միասնությամբ, բովանդակում է նոր գիտական արդյունքներ, որոնք վկայում են քրեական դատավարության իրավունքի և կրիմինալիստիկայի գիտության զարգացման մեջ հեղինակի համեստ ներդրման մասին:

3. Ատենախոսության նյութերն ամբողջությամբ ներկայացված են հեղինակի հրապարակումներում և հայտնի են իրավաբանական լայն հանրությանը:

Սուրեն Բաղինյանի <<**Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները**>> թեկնածուական ատենախոսությունը ԺԲ.00.04.– **Դատական իրավունք** – (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական

դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման **ԺԲ.00.04.– Դատական իրավունք** – (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի
քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան

10.06.2026թ.

Ս.Ա.Դիլբանդյանի ստորագրությունը
հաստատում եմ՝ ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի դեկանի տեղակալ, Ա. Պետրոսյան